կումունդուրոսի մինիստրությունը, արձակելով պարլամենտը, ձեռք բերեց թագաւորի ստորագրությունը, հետևաբար այդ անբարեկանությունը թագաւորի դէմ է ուղղվել։ Պարլամենտի ընդդիմադրական կուսակցությունը, որ սահմանադրության հաւատարիմ կողմնակից Տրիկուպիսի առաջնորդությամբ չափաւոր քաղաքականության էր հետևում, այժմ կառավարության դէմ թշնամական դիրք է բռնել։ Տրիկուպիս իր „Hora“ լրագրի մէջ մի շարք յօդուածներ տպեց, որոնք ցոյց են տալիս, թէ Ցունասատանին ապագայում ինչ է սպասում։ Շատերը կարծում են, որ Ցունասատանը ահագին քայլերով դիմել է այնպիսի կառավարչական եղանակի, որ եթէ ոչ ձևով, գոնեա բնաւորությամբ հանրապետական կը լինի։ Տրիկուպիսի յօդուածների մէջ արծարծվում է քաղաքական մի նախագիծ, որ ձևակերպվում է հետևեալ կերպով. պատգամաւորների նոր ժողովը հիմնադիր ժողով կը լինի. թագաւորը պէտք է զրկվի պարլամենտը արձակելու իրաւունքից. ժողովը, բացի արձակուրդներից անընդհատ նիստեր կունենայ չորս ամսի շրջանակ, իսկ այդ ժամանակամիջոցը լրանալուց յետոյ նախագահը կարձակէ ժողովը և կառավարությունը նոր ընտրություններ կը նշանակէ։ „Hora“ առանց երկիւղի յայտնում է, որ, եթէ թագաւորը չի ընդունի այդ պայմանները, Ցունասատանը առանց միապետության էլ կարող է կառավարվել։ Աթէնքի գլխաւոր դատարանի պրոկուրորի պաշտօնակատար Թոմ Խոգայս յայտնեց լրագիրների մէջ, որ նա հրաժարվում է իր պաշտօնից, որպէս զի հանրապետական կուսակցության պատգամաւոր ընտրվի։ Ատիկայի բոլոր պատգամաւորները հանրապետական կուսակցության են պատկանում։

ԱՆԳԼԻԱ

Պարլամենտի պարապմունքների սկսվելուն պէս կառավարությունը մի օրինագիծ կառաջարկէ Լօնդոնի խորհրդարանի վերանորոգության մասին։ „Շատերը կարծում են, որ Գլադստոն դրանով կամենում է յետաձգել արդէն ասպարէզ եկած կոլուսական խնդիրը Անգլիայի և Շոտլանդիայի մէջ։ Անգլիայի և Շոտլանդիայի մէջ ահագին կալուածներ ունեցող լորդերը կամենում են ժամանակ վատնել։ Բայց այդպիսի քաղաքականությունը կարող է վատ հետևանքներ ունենալ, որովհետև անգլիական երկրագործները արդէն գլուխ են բարձրացնում և գործի յետաձգելը կարող է վատ հետևանքներ ունենալ։ Լօնդոնի լրագրների տեղեկությունների համեմատ Եգիպտոսի մէջ գործերի դրությունը հետզհետէ վատանում է։ Սուլթանի գործակատարները համոզում են խեդիվին միանալ ընդհանուր մահմեդական շարժմանը, մինչդեռ Շերիֆ-փաշա աշխատում է հաշտեցնել նրան ավտօնոմիստների հետ։ Ասում են, որ խեդիվը երկու կուսակցություններին էլ յոյսեր է տալիս, իսկ ինքը գաղտնի յարաբերություններ ունի սուլթանի հետ, որ յոյս ունի ազդել նրա կրօնամոլության վրա։ Շատերը երկիւղ են կրում, որ գինուորական ապստամբությունը չը կըրկնվի, որովհետև գինուորական կուսակցությանը լուրեր են հասել իբր թէ խեդիվը Շերիֆ-փաշայի տեղ կամենում է սուլթանի կողմնակիցներից մէկին նշանակել։

Մի քանի լրագրիների տեղեկությունների համեմատ գերմանական դեսպան կոմ Մյունստեր վերադարձել է Լօնդոն, նոր հրահանգներ ստանալով իշխան Բիսմարկից։ Բացի այդ գերմանական դեսպանատան երկրորդ քարտուղար կոմ Հերբերտ Բիսմարկին յանձնարարված է հետևեալը. իբր թէ իշխան Բիսմարկ առաջարկում է Անգլիային ազատությամբ գործել Եգիպտոսի մէջ, չը վախենալով որ և է պետության ընդդիմադրությունից։ Իբր թէ գերմանական կառավարությունը յանձն է առել թոյլ չը տալ որ և է պետության միջամտություն եգիպտական գործերի մէջ։ Լօրդ Գրէնվիլ յայտնեց իր ընկերներին այդ յանձնարարությունը և նրանց հետ խորհրդակցելուց յետոյ մերժեց իշխան Բիսմարկի առաջարկությունը։ Ասում են, որ Գերմանիան մըտադիր է եղել թշնամություն սերմանել Անգլիայի և Ֆրանսիայի մէջ, որոնց յարաբերությունները վերջին ժամանակներում հետզհետէ բարեկամական են դառնում։ Զը նայելով, որ գերմանական պաշտօնական թերթերը հերքեցին այդ լուրերը, այնուամենայնիւ նրանք արտատպվեցին ֆրանսիական լրագիրների մէջ։ Քաղաքական շրջանների մէջ լուր է տարածված, որ Գերմանիան չմտադիր է եղել ատատկացնել Ֆրանսիայի և Անգլիայի մրցումը Եգիպտոսի մէջ։

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

Փարիզ, 23 հոկտեմբերի

Երկու շաբաթ առաջ Նամակ էի գրած ձեզ, որի մէջ յայտնել էի թէ այստեղ հրատարակվող «Justice» լրագրի հետ փարիզի հայ երիտասարդները բանակցության մէջ մտել էին, հայոց վրա յօդուածներ գրելու մասին։ Բանակցությունների միջնորդը ազգային ժողովի պատգամաւոր պ. Վէրմոն էր։ Այժմ պարոնը յայտնել է թէ մի այլ կոմբինացիա էլ կարելի է առաջարկել. այն՝ է որ փոխանակ «Justice» լրագրի դարձնել «Union Republicaine» լրագիրը հայոց դատի պաշտպան։ Այդ թերթը խմբագրական ժողով կայացնելով, ինքն պ. Վէրմոն ընդունել է լինել թերթի խմբագիրներից մին պ. Ֆլօկէի (Floquet) նախագահությամբ, որ ինչպէս յայտնի է, պատգամաւորների ժողովի երրորդ նախագահն է։ Այս ընտրության շնորհով, պ. Վերմոն յոյս ունի անել «Union Republicaine» լրագրում այն, ինչ որ նախ պէտք է կատարվէր «Justice» լրագրում։

Հայ երիտասարդությունը փարիզում խոստացել է աշխատակցել յօդուածներով յիշեալ ֆրանսիական լրագրին։ Միայն այժմ նիւթական միջոցներ են հարկաւոր։ Թէ որքան դրամ պէտք է, կը գրեմ հետեւեալ Նամակով։

Այդ տեսակ գործը եթէ աջողվի, մեծ օգուտ կարող է տալ, որովհետև խմբագիրները մի և նոյն ժամանակ պատգամաւորներ լինելով, կարող են հարկաւոր ժամանակ հարցումներ էլ անել ֆրանսիական ազգային ժողովին հայոց խնդրի մասին։

Այստեղի հայոց ընկերությունը ամեն կերպ աշխատում է հաստատ կապեր կապել ռուսահայերի հետ և նրանց միջոցով մի որ և է պաղարտեր տնօրինություն անել տալ։

* * *

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սոցիալիստ Հազէնկլէվէր, որ ընտրված է գերմանական բարեխառագի պատգամաւոր երկու տեղ, Մայնցում և Օֆէնբախում, ընդունել է այդ վերջին տեղի պատգամաւորությունը, իսկ Մայնցի ընտրողներին խորհուրդ է տալիս ընտրել սոցիալիստ Բէբէլին։ Երևի սա կընտրվի էլ Մայնցում։ Այդպիսի նոր ընտրություններ դեռ ևս 16-են թուով, որոնց մէջ երկուսը Բերլինում։ Բիսմարկ չը բաւականանալով յայտնել, որ ընդդիմադրող կուսակցությանն ընտրությունները իր անձի դէմ էին ուղղված, ակնարկել է որ վերջին ընտրություններով գերմանական ազգը բողոքել է նոյն իսկ կառավարության դէմ։ Այդպիսով, եթէ նոր ատանվեց ընտրություններն էլ ընդդիմադրական կուսակցությանը կը պատկանեն, դրանով գերմանական ազգը բողոքած կը լինի, Բիսմարկի ասելով, նոյն իսկ կառավարության դէմ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 նոյեմբերի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. Պետական ապահովության կանոնների 17-դ յօդուածը փոխված է. Առաջ գլխաւորնահանգապետները իրաւունք ունէին փակված դռներով նշանակել այնպիսի գործերի քննությունը, որոնք կարող էին վրդովմունք պատճառել, այժմ վճռված է, որ այդպիսի բնաւորության բոլոր գործերը փակված դռներով քննվեն դատարանների մէջ։ Առանձին սահմանափակություններ ընդունված են պետական յանցանքների գործերի համար։ „Порядокъ“ լրագիրը հաղորդում է. Հրատարակված է հրաման գինուորական բնաւորություն ունեցող գործերի քննությունը գինուորական դատարանների մէջ փակված դռներով կատարելու մասին։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ գօրքերի հագուստի փոփոխման մասին կը յայտնվի 1882 թ. մարտի 1-ին։ Ասում են, որ կոչնչանան այն արտօնությունները, որոնք տրվում են ներքին նահանգներից Սիբիր, Արևմտեան երկիրը և կովկաս ուղարկող աստիճանաւորներին։ Ներքին գործերի մինիստրության մէջ հարց է ծագել նահանգական ապարանները և թերթերը մասնաւոր անձանց կապալով տալու մասին։ Մրօվինսկու գործի քննությունը նշանակված է նոյեմբերի 25-ին փակված դռներով։ Կը պաշտպանեն. Մրօվինսկուն՝ Սպասօվիչ, Տեգլեվին՝ Գերարդ, Ֆուրսովին՝ Գաբվկին։ Մեղադրողը Մուրավէօվն է։ Շերվաշիձէ մտադիր է բողոքել բարձր դատարանին։

«ՄՇԱԿԻ» ԳԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԲԱԳՈՒ. Յովհաննէս Առաքելեանց. Ցետ ուղարկեցինք ձեզ ձեր 31 բուբլ։

—ԴԻԼԻՋԱՆ. Լինն պարոններին. Շատ շնորհակալ ենք ձեր համակրական հեռագրի համար «Երբոպա և Հայաստան» առաջնորդող յօդուածի առիթով։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

լորդ է ասել, թէ որչափ լաւ կարող էր գնահատել իր ձեռքը երկնքից իջած լիութեան աղբիւրը. օգուտ քաղելով նորանից, որ ինքը էֆենդի է, հետևաբար ամեն բոպէ երկիւղալի է յանձնաժողովի միւս անդամների համար մատնութիւններով. նա չը դանդաղեց անմիջապէս իր ձեռքը հաւաքել յանձնաժողովի բոլոր գործունէութիւնը և իր կամայականութիւնը այն սահմանին հասցրեց, որ չը նայելով թէ Ներսէս պատրիարքը անուանական կերպով համարվում էր յանձնաժողովի նախագահը, այդ նախագահի ձայնը այնչափ արհամարվեց, որ երբ պատրիարքը մի անգամ իր սեփական ձեռքով նամակ գրեց Աբիկ Ունջեանին հինգ օսմանեան լիրա (մօտ յիսուն բուբլ) տալ մի խիստ ստիպողական ազգօգուտ գործ յառաջ տանելու համար, Ունջեանը յանդգնություն ունեցաւ յետ դարձնել պատրիարքի նամակը, առանց ո և է բաւարարություն տալու նրան։ Մի չորս ամիս առաջ գալիս է ինձ մօտ մի մշեցի քահանայ մի կարճառօտ աղերսագիր ձեռքին, որի մէջ ասում է թէ ինքը ոչ մուրացկան է և ոչ թափառաշրջիկ մինը, այլ պետական յանցանքների պատրուակով տէրութեան հրամանով կ. Պոլիս բերել տուած հայ քահանայ է, որի յանցանքը այն է, որ կառավարության աչքում նա ճանաչված է ապստամբ և չարագրգիռ։ Հասկանալի է, որ ազգայնութեան զգացմունք կրող այսպիսի մի կրօնական մարդ մանաւանդ նորա համար պիտի պատուած լինի, որ այդպիսիների թիւը այնչափ հազուագիւտ է մեր հասամալ կղերի մէջ։

—Ինձնից ինչ էք ուզում, տէր հայր, ասում եմ, իմ անձնական օգնությունը ձեզ համար ոչինչ է, վանորոյ գիմեցէք սովելոց յանձնաժողովին, որի պաշտօնը հիմայ ձեզպէսներին օգնելն է, երբ էլ չը կայ սով Հայաստանի մէջ։» Ազքատ, բայց կարիչ քահանան ոչինչ չէ ասում այլ միայն զայրությից դողալով, դառնապէս արտասվում է. երեսակայեցէք իմ դրությունը—«Լաւ, ես կը խօսեմ ձեզ համար պատրիարքին, ասում եմ, և եթէ կուզէք եկէք ինձ հետ հէնց այս բոպէ։»—«Ո՛, էֆենդի» ասում է հեկեկելով երիտասարդ և կրակոտ քահանան, աչքը բարկության կատաղությունից արիւն բռնած, ես ապրուստի ցաւ չունեմ, այդ ցաւը փառք Աստուծոյ իմ այստեղի մշեցի բեռնակիր հայրենակիցներս կը փարատեն, բայց ես ունեմ ուրիշ ցաւ, որ ինձ խեղդում է. իմ պատիւս ոտնակոխ է եղած և ես ինչպէս պետական յանցաւոր և արգելեալ ոչինչ չեմ կարող անել, վանորոյ կաղաչեմ ձեզ այն վատից իմ ոխս հանէք։» Ինչ է յայտնվում. խեղճ քահանան պաշտօնական նամակով գնում է սովելոց յանձնաժողով, որը լինում է միշտ Աբիկ Ունջեանի տանը և նամակը դեռ ձեռքը չը տուած, Ունջեանից կարծվում է մուրացկանի մէկը և ամեն տեսակ խայտառակ խօսքերով ճանապարհ է դցվում, բայց քանի զարմանք որ նամակի մէջ մի խօսք անգամ չէ լինում իրան քահանայի համար, այլ նա միայն միջնորդ է լինում կ. Պոլսում մերձիմահ պառկած մի մըշեցուն օգնելու համար։

Մի այլ օրինակ. Աբիկ Ունջեանը Միացեալ ընկերության նախորդ անօրէն ժողովի օրով Զաբեհ Շիշմանեանի և Պետրոս Վասիլեանի խաթեր համար, որովհետև երեքն էլ Օրթաքէօյցի են և դրացիներ, Միացեալ ընկերության ամիսը հինգ զրուշ (մօտ 35 կոպ.) նուէր է տալիս։ Երբ ընկերության անօրէն ժողովը փոխվում է և պ. Մին. Զերազն է ընտրվում առանձնապես, Ունջեանը էլ դադարեցնում է այդ 35 կոպ. տուրքը, պատճառ բռնելով վանայ վարժապետանոցի փակումը (իբր թէ ինքն էլ սկզբունք ունէ...)

Մի այլ օրինակ. Հնդկաստանի Եավա կղզիից այս օրերս ուղարկում են սովելոց յանձնաժողովին մօտ վեց հարիւր ոսկի և այնտեղի նուիրատու հայերը գրում են թէ հիմա էլ մտադիր են հանգանակություն բաց անել կ. Պոլսի Միացեալ ընկերության համար։ Միացեալ ընկերության անօրէն ժողովը խնդրում է Ունջեանից հաղորդել ժողովին Եավայի բարեսէր ազգայիններին անունը, որով կարելի լինի խնդրագրեր ուղարկել նոցա վրա իրանց նպաստները փութացնելու համար։ Ընկերության չորս անգամ գրած նամակին ոչ մի պատասխան չը տալով, Ունջեանը աշխատում է միայն զանազան մեքենայություններով դուրս հանել Մին. Զերազին իր բոլոր ընկերների հետ, որ դարձեալ կարողանայ Շիշմանեանի և Վասիլեանի նման մարդիկ գնել Միացեալ ընկերության գլուխ, որով կարողանայ ինքը դարձեալ ընկերության փողերի «չանեցնողը» լինի և վարվի նոցա հետ իր արքանեակների մասնակցությամբ իր ուզածի պէս։

Ահա այսպէս մի անձն է այն մարդը, որը եղել է և է «անչահախնդիր» և «անձնազոհ» տընօրինողը սովելոց «հայրենասէր» խնամատար յանձնաժողովի մօտ մէկ միլիոն բուբլիներ։ Հարկաւոր եզրակացությունները էլ ինքներդ կարող էք անել։ Սա է պատճառը, որ հասարակությունը ամեն կողմից տրտունջ է յայտնում այդ յանձնաժողովի մինչև հիմայ անկօնտրոլ կերպով վարող ընթացքի դէմ. թէպէտ և հարուստների համար միշտ պատրաստ օրգան «Մասիս» և «Թերջիմանի Լէֆքեար» լրագիրները մինչև հիմայ ևս շարունակում են երկնից արքայության մէջ «արժանի» տեղ փնտրել սովելոց խնամատար յանձնաժողովի վերոյիշեալ անդամների համար...

Սովը պրծած է հիմայ Հայաստանի մէջ. ժամանակ է իմանալու թէ որչափ կարողացան արդարացնել ազգի այսպիսի մի մեծ վստահությունը պ. պ. Կիւլպենկեան, Ունջեան և ընկ.։

Սպասելով յանձնաժողովի պատասխանին, պարտաւորություն եմ համարում բոլոր կարեոր բացատրությունները հետզհետէ տալ՝ Մշակի ընթերցողներին այս մեծ համազգային հարցերը բոլորովին պարզելու համար ի միտս ունենալ այն նուիրատուների, որոնք պատրաստ են ամեն անգամ, ամեն ճգնաժամի մէջ աւել մեծ օգնություն հասցնել հայրենիքին, համոզվելով, որ այդ օգնությունը ինչպէս հարկն է միշտ իր տեղն է հասնում։

Գրիգոր Նիկողոսեան